ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ուրանի ռադիոակտիվության հայտնագործումից հետո Մարիա և Պիեռ Կյուրիները փորձեցին հասկանալ՝ ռադիոակտիվությունը միայն ուրանի՞ հատկությունն է, թե՞ կան այդ հատկությամբ օժտված այլ քիմիական տարրեր ևս: Այդ նպատակով նրանք ուսումնասիրեցին այն ժամանակվա հայտնի բոլոր քիմիական տարրերը և հայտնաբերեցին ևս երկուսը՝ ռադիումը և պոլոնիումը: Սրանց ճառագայթման ակտիվությունը մոտ 1000 անգամ գերազանցում էր ուրանի ակտիվությանը:

Կյուրի ամուսիններն ուզում էին ավելի խոր հետազոտություն կատարելու համար ռադիումի հանքաքարից մաքուր ռադիում անջատել: Սա չափազանց ծանր աշխատանք էր: Մարիա Կյուրին մշակեց շուրջ 11 տոննա հանքաքար, առանց որևէ պաշտպանական միջոց օգտագործելու: Մարդիկ ամենևին պատկերացում չունեին ռադիոակտիվ ճառագայթման վտանգների մասին: Ռադիոակտիվ փոշին լաբորատորիաներում կուտակված էր: Փորձարար գիտնականները փորձանմուշները վերցնում էին ձեռքով, պահում գրպաններում: Անգամ 55 տարի անց Մարիա Կյուրիի նոթատետրը ճառագայթում էր, այնքան ուժեղ, որ հաշվիչ սարքը ճրթճրթում էր: Մարիա Կյուրին մահացավ 1934 թվականին՝ ռադիոակտիվ ճառագայթման մեծ չափաբաժին ստանալու հետևանքով: